

ԱՂՕԹՔ՝ ՈՐԴԻՒՆ

Ճշմարիտ Լոյսէն՝ համագոյակից Լո՛յս, Աստուած՝ Աստուծմէ, Կեանք՝ Կեանքէն, դուն՝ Հօրը Խօսքը եւ Միածին Որդին, անժամանակ եւ անեղ. դուն՝ բոլորին Արարիչը, որ հաճեցար մարդ դառնալ, եւ Արարիչդ արարած եղար՝ մարմնով, Խօսքդ՝ մարմին եղար, անեղդ՝ սրբեղծուած, անմահդ՝ մահկանացու, մեծդ՝ փոքր, եւ ճոխդ՝ աղքատ: Դուն որ մշտագոյ ես եւ սկիւբէն միշտ Հօրը հետ, բայց Կոյսէն ծնած մանո՛ւկ եղար, կատարելութեան հասցուր իմ մանկութիւնս, որովհետեւ դո՛ւն ես բոլոր ինքնին անկատարները քու վօրութեամբդ լրացնողը եւ բոլոր նիւթեղէն եւ աննիւթ գոյութիւններու Արարիչը:

Դուն, որ Հօրը Իմաստութի՛ւնն ես, արժանի՛ ըրէ որ անունդ կրեմ՝ քու ճշմարիտ իմաստութեամբդ, եւ հրամայէ՛ որ իմաստնանամ: Զիս կատարեա՛լ դարձուր հոգիով, դուն՝ անճառելի՛ Կատարելութիւն: Թող իմ երիտասարդական վօրութիւնս նորոգուի՛, ինչպէս արծիւին երիտասարդութիւնը կը նորոգուի, որովհետեւ ատոր համար էր որ դուն նոր մարդ եղար: Թոյլ մի՛ տար որ իմ մէջս կռուին հին կերպարանքը եւ նմանութիւնը՝ հին մարդու առիթը. եւ եթէ երբեք վայն իմ մէջս առի, դո՛ւրս շարտէ վայն, սուգի հագուստի պէս, բոլոր մարդոցմէ:

Դաստիարակէ՛ իմ խակ միտքս, սորվեցո՛ւր ինծի՛ քու հրամաններուդ համաձայն ապրիլ, եւ թոյլ մի՛ տար որ իմ սխալական եւ դիւրաւ յանցանքի մէջ ինկող այս տարիքիս՝ տղայական բարքով, անկարգութեամբ ապրիմ, այլ՝ քու աստուածային հեղութեամբդ եւ քու մեծ եւ անբացատրելի գթութեամբդ՝ թող միշտ ինծի մօտի՛կ մնան քու շնորհքիդ պահպանիչ վզուշացումները, որպէսպի ես՝ քու ծառադ, փրկուիմ եւ ապրիմ: Եւ քու կամքիդ քաղցր սիրոյն հաճութեամբը թող հանդարտիմ մեր բնութեան յատուկ ընդդիմութիւններէն, հոգիի մարտերէն, ինչպէս նաեւ՝ հմուտ ըլլամ պատերազմելու քու օրինակովդ, որ նախամարտիկ եղար մեզի համար, եւ քու անդիմադրելի, ամենայաղթ վօրութեամբդ՝ մնամ անվնաս, առանց երբեք լքուելու քու կողմէդ:

Իմ հե՛տս եղիր, ո՛վ Տէր, քնացած ըլլամ թէ արթուն, տուն նստած ըլլամ թէ ճամբու մէջ, եւ շնորհէ՛ որ բոլոր իմ գործերս իրենց աւարտին հասցնեմ՝ քու կամքիդ համաձայն եւ քու փառքիդ համար: Թող իմ խօսքերուս առարկան քու Օրէնքդ ըլլայ, հոգիս թող քու

պատուիրաններուդ վրայ խոկայ, եւ երիտասարդական զուարթութիւններուն փոխարէն՝ միայն քու սէրդ բորբոքի իմ հոգիիս մէջ:

Նաեւ առաջ արցո՛ւնք պարգեւէ ինծի, որպէսզի արժանի ըլլամ քու ներկայութեանդ կանգնելու՝ իբրեւ կատարեալ աղօթող, եւ կարենամ լուալ իմ մեղքերուս աղտը եւ ամէն յանցանք որ գործեր եմ՝ քու պատուիրաններդ եւ սուրբ եւ ահաւոր երկիւղդ մոռնալուս իբրեւ հետեւանք, եւ ըլլամ մեղքի ամէն տիղմէ եւ աղտեղութենէ մաքրուած ու վտուած, իբրեւ քու ծառաներէդ մէկը:

Շնորհէ՛ ինծի, ո՛վ իմ Աստուածս Յիսուս, որ արժանի ըլլամ վայելուչ փառաբանութիւն մատուցանելու եւ արժանապէս օրհնելու քու մեծ Տէրութիւնդ, Հօրը եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱԻԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ